ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 1

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2561-ARM (COL)

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ

01.01.2017-23.02.2018թթ. ժամանակաշրջանի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան-2019

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9
ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 10
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11
ՀԱՎԵԼՎԱԾ. ԸՆԹԱՑԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ 20

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև կնքված թիվ 2561-ARM (COL) վարկային համաձայնագրով (Վարկային Համաձայնագիր) ֆինանսավորվող և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի (Կազմակերպության) կողմից իրականացվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի–Ծրագիր 1»-ի (Ծրագիր) 01.01.2017-23.02.2018թթ. ժամանակաշրջանի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները (Ֆինանսական հաշվետվություններ), որոնք ներառում են դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվությունը, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը, վարկային միջոցների մասհանման հաշվետվությունը, ընթացիկ հաշվի հաշվետվությունը, ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով՝

- Ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 01.01.2017-23.02.2018թթ. ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումները և ծախսումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ՝ ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի» Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ):
- Բոլոր էական առումներով, ծախսումները կատարվել և ընթացիկ հաշիվն օգտագործվել է՝ համաձայն Վարկային Համաձայնագրում նշված նպատակների և Ասիական Զարգացման Բանկի կողմից հրապարակված «Մասհանումների ուղեցույցի»:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականություն-ները՝ այդ պահանջներին և ՀԷՄՄԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Հանգամանքի շեշտադրում

Ուշադրություն ենք հրավիրում Ֆինանսական հաշվետվությունների 7-րդ ծանոթագրությանը, որում նշվում է, որ 2016 թվականին ավարտված շինարարական աշխատանքների վերաբերյալ ստորագրված ընդունման

վկայագրում նշված թերությունները վերացված համարելու վերաբերյալ Կազմակերպության և կապալառուի միջև առկա են տարաձայնություններ, ու դրա շուրջ ընթանում են բանակցություններ: Այդ հանգամանքը անորոշություն է առաջացնում նշված ծանոթագրությունում արտացոլված հետերաշխիքային գումարների գծով կրեդիտորական պարտքի վերջնական մեծության վերաբերյալ: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի կապակցությամբ:

Այլ հարցեր

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի–Ծրագիր 1»-ի 2016 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը դրանց վերաբերյալ արտահայտել է չձևափոխված կարծիք 2017 թվականի հունիսի 29-ին:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ՝ ըստ հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի» ՀՀՀՀՄՍ-ի և Ասիական Զարգացման Բանկի կողմից հրապարակված «Մասհանումների ուղեցույցի» համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կա՛մ լուծարելու Կազմակերպությունը, կա՛մ դադարեցնելու դրա գործունեությունը, կա՛մ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար պատասխանատու է լիազոր մարմինը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում

ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու կամ չլինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Կազմակերպությունն այլևս չհամարվի անընդհատ գործող:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Կազմակերպության ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Տարոն Վարազդատյան

Որակավորված աուդիտոր

Արթուր Հարությունյան

Տնօրեն

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

07 մայիսի 2019թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM (COL)
01.01.17-23.02.18թթ. ժամանակաշրջանի համար

USD

	Ծնթ.	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.17-23.02.18թթ.	Աճողական առ 23.02.2018թ.
Ֆինանսավորում			
ԱԶԲ 2561-ARM(COL) վարկի ֆինանսավորում	3	22,809	57,061,749
ԱԶԲ 2729-ARM վարկի ֆինանսավորում	3	-	2,996,620
Հայաստանի Հանրապետության ֆինանսավորում	3	2,281	12,558,095
Ընդամենը ֆինանսավորում		**25,090**	**72,616,464**
Ծախսումներ			
Աշխատանքներ		-	53,614,621
Խորհրդատվական ծառայություններ		22,809	3,653,605
Ապրանքներ		-	-
Ծրագրի կառավարման աջակցություն		-	1,897,628
Տոկոսագումար		-	916,213
Հարկեր, տուրքեր		2,283	12,519,045
Ընդամենը ծախսումներ		**25,092**	**72,601,112**
Այլ մուտքեր (ելքեր)	6	(544)	(12,928)
Փոխարժեքային զուտ օգուտ (կորուստ)		2	(2,424)
Դրամական միջոցների զուտ աճ (նվազում)		(544)	-
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	3.3	544	-
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	3.3	-	-

Գլխավոր տնօրենի
ժամանակավոր
պաշտոնակատար
Քրիստինե Ղալեչյան

Գլխավոր հաշվապահ/Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի ղեկավար
Մանանա Թարփոշյան

07 մայիսի 2019թ.

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM (COL)
01.01.17-23.02.18թթ. ժամանակաշրջանի համար

USD

Հիմնական բաղադրիչներ	Ծախսումներ		Ֆինանսավորման աղբյուրը			Ֆինանսավորման աղբյուրը		
	Ընդամենը		ԱԶԲ 2561-ARM (COL) վարկ	ՀՀ ֆինան-սավորում	ԱԶԲ 2729-ARM վարկ	ԱԶԲ 2561-ARM (COL) վարկ	ՀՀ ֆինան-սավորում	ԱԶԲ 2729-ARM վարկ
	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.17-23.02.18թթ.	Աճողական առ 23.02.2018թ.	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.17-23.02.18թթ.			Աճողական առ 23.02.2018թ.		
Երևան-Աշտարակ քառաշարք ճանապարհի 18.4 կմ հատվածի վերակառուցում և/կամ վերականգնում	-	23,895,106	-	-	-	18,707,608	4,034,285	1,153,213
Երևան-Արարատ քառաշարք ճանապարհի անվտանգության բարձրացում	-	41,142,864	-	-	-	31,884,849	7,414,608	1,843,407
Օժանդակում ծրագրի կառավարմանը, ներառյալ ներդրումային ծրագրի ներքո հետագա ծրագրերի մանրամասն նախագծի առաջարկվող ֆինանսավորումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը և մրցույթի փաստաթղթերի և գնումների պատրաստումը	25,092	6,646,929	22,809	2,283	-	5,551,233	1,095,696	-
Տոկոսագումար	-	916,213	-	-	-	916,213	-	-
Ընդամենը	25,092	72,601,112	22,809	2,283	-	57,059,903	12,544,589	2,996,620

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱՀԲ վարկ թիվ 2561-ARM (COL)
01.01.17-23.02.18թթ. ժամանակաշրջանի համար

USD

Դիմումի համար	Ծախսային հոդվածներ				Կանխավճար	Ընդամենը
	Շինարարական աշխատանքներ	Խորհրդատվական ծառայություններ	Ծրագրի կառավարման աջակցություն	Տոկոսագումար		
	1	2	4	5		
00049	-	9,489	-	-	-	9,489
00050	-	1,865	-	-	-	1,865
00051	-	11,455	-	-	-	11,455
	-	**22,809**	-	-	-	**22,809**

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM (COL)
01.01.17-23.02.18թթ. ժամանակաշրջանի համար

Արժույթ	USD
Բանկի հաշվեհամար	900000900028
Բանկ	ՀՀ գանձապետարան
Բանկի հասցե	ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1

	ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM (COL)
	USD
Մնացորդն առ 01.01.2017թ.	-
Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի տարբերություն*	(1,846)
ԱԶԲ ֆոնդի կանխավճար/համալրում	-
Ընդունելի վճարումներ	-
Մնացորդն առ 23.02.2018թ.	-
Հաշվետու ժամանակաշրջանի վերջի տարբերություն*	**(1,846)**

(*) Տարբերությունն իրենից ներկայացնում է.

	23.02.2018թ.	31.12.2016թ.
	USD	USD
Այլ ֆոնդին տրամադրված գումար (Ծանոթ. 6)	1,846	1,846
	1,846	**1,846**

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱՀԲ վարկ թիվ 2561-ARM (COL)
01.01.17-23.02.18թթ. ժամանակաշրջանի

USD

Հոդվածներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու ժամանակաշրջան	Ամողական առ	Հաշվետու ժամանակաշրջան	Ամողական առ	Հաշվետու ժամանակաշրջան	Ամողական առ
	01.01.17-23.02.18թթ.	**23.02.2018թ.**	**01.01.17-23.02.18թթ.**	**23.02.2018թ.**	**01.01.17-23.02.18թթ.**	**23.02.2018թ.**
Աշխատանքներ	-	53,614,621	61,732	51,075,838	(61,732)	2,538,783
Խորհրդատվական ծառայություններ	22,809	3,653,605	23,014	3,696,610	(205)	(43,005)
Ապրանքներ	-	-	-	-	-	-
Ծրագրի կառավարման աջակցություն	-	1,897,628	-	1,911,829	-	(14,201)
Տոկոսագումար	-	916,213	-	916,213	-	-
Այլ (հարկեր)	2,283	12,519,045	572,615	13,188,102	(570,332)	(669,057)
Ընդամենը	**25,092**	**72,601,112**	**657,361**	**70,788,592**	**(632,269)**	**1,812,520**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորումը

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) և Ասիական Զարգացման Բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) միջև 2009թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված Շրջանակային ֆինանսավորման համաձայնագրով ԱԶԲ-ն համաձայնել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի ֆինանսավորման նպատակով ՀՀ-ին տրամադրել բազմափուլ (բազմատրանշային) վարկավորում՝ 500,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով:

ԱԶԲ-ն Բազմափուլ Ֆինանսական Գործիքի (ԲՖԳ) ներքո վարկերը տրամադրում է ըստ առանձին ծրագրերի՝ տրանշների, երբ վերջիններս պատրաստ կլինեն ֆինանսավորման համար՝ համաձայնագրով սահմանված պահանջների բավարարման դեպքում: Յուրաքանչյուր վարկ հանդիսանում է առանձին տրանշ: Տրանշները կարող են ունենալ տարբերվող ֆինանսավորման պայմաններ, տրամադրվել միաժամանակ կամ հաջորդաբար:

ՀՀ-ի և ԱԶԲ-ի միջև 2009թ. հոկտեմբերի 12-ին ստորագրված «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր–Ծրագիր 1» (այսուհետ՝ Ծրագիր) վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ն ՀՀ-ին տրամադրել է 38,443,000 SDR (Հատուկ փոխարկման իրավունք) գումարով 2561-ARM (COL) վարկը:

Տրամադրված վարկը փակվել է 2018թ. փետրվարի 23-ին:

Համաձայն ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և ԱԶԲ-ի միջև 17.06.2016թ. նամակ-համաձայնագրի, կատարվել է ԱԶԲ 2729-ARM վարկային միջոցների վերաբաշխում, ինչի արդյունքում 6,000,000 ԱՄՆ դոլար հատկացվելու է Ծրագրի իրականացմանը:

Համաֆինանսավորումը տրամադրվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

1.2. Ծրագրի նպատակները

2561-ARM (COL) վարկային համաձայնագրով իրականացվող Ծրագրի նպատակներն են.

- Երևան-Աշտարակ քառաշարք ճանապարհի 18.4 կմ հատվածի վերակառուցում և/կամ վերականգնում,
- Երևան-Արարատ քառաշարք ճանապարհի անվտանգության բարձրացում,
- Օժանդակում ծրագրի կառավարմանը, ներառյալ ներդրումային ծրագրի ներքո հետագա ծրագրերի մանրամասն նախագծի առաջարկվող ֆինանսավորումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը և մրցույթի փաստաթղթերի և գնումների պատրաստում,
- տրանսպորտային ոլորտի ռազմավարության ներքո ճանապարհային ենթասեկտորային ծրագրին օժանդակության տրամադրում:

1.3. Ծրագրի բյուջեն

Ծրագրի ճշտված բյուջեն 2018թ. փետրվարի 23-ի դրությամբ կազմում է 73,061,749 USD:

Կատեգորիա	ԱԶԲ Վարկ 2561-ARM (COL)				ԱԶԲ Վարկ 2729-ARM	Հայաստանի Հանրա-պետություն	Ընդամենը
	SDR սկզբնական	USD սկզբնական	SDR վերաբաշխված	USD վերաբաշխված և ճշտված*	USD	USD	USD
Աշխատանքներ	24,347,000	38,000,000	34,121,264	50,592,457	6,000,000	-	56,592,457
Խորհրդատվական ծառայություններ	3,204,000	5,000,000	2,401,420	3,653,605	-	-	3,653,605
Ապրանքներ	641,000	1,000,000	-	-	-	-	-
Ծրագրի կառավարման աջակցություն	641,000	1,000,000	1,249,607	1,899,474	-	-	1,899,474
Տոկոսագումար	1,281,000	2,000,000	627,720	916,213	-	-	916,213
Չհատկացված	8,329,000	13,000,000	-	-	-	-	-
Այլ (ներառյալ տեղական հարկեր)	-	-	-	-	-	10,000,000	10,000,000
Ընդամենը	**38,443,000**	**60,000,000**	**38,400,011**	**57,061,749**	**6,000,000**	**10,000,000**	**73,061,749**

* SDR-ով արտահայտված վարկի բյուջեի USD-ով համարժեքը հաշվարկվում է՝ USD-ով ստացված կուտակային ֆինանսավորմանը գումարելով չբաշխված ֆինանսավորման SDR-ի գումարների՝ այդ ամսաթվին USD համարժեքը: 23.02.2018թ. դրությամբ SDR/USD փոխարժեքը սահմանված է 1.4506 (31.12.2016թ.՝ 1.344330 USD):

1.4. Ընդհանուր դրույթներ Ծրագիրն իրականացնող կազմակերպության վերաբերյալ

ա) Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծվել է ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1304-Ա որոշման հիման վրա՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վերակազմակերպման և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի միացման ճանապարհով վերակազմակերպման միջոցով և գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2017 թվականի փետրվարի 7-ին: Կազմակերպությունը հանդիսանում է «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը՝ փոխանցման ակտերին համապատասխան:

Կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, միջազգային պայմանագրերին, գործող այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

Կազմակերպության

Անվանումը՝	«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Պետական գրանցման համարը՝	286.210.945286
Պետական գրանցման վկայականի համարը՝	03Ա1095286
Պետական գրանցման ամսաթիվը՝	09.02.2017թ.
Իրավաբանական հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 28
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	02702598

Կազմակերպության հիմնական նպատակն է ՀՀ-ում տրանսպորտի ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումը՝ ներառյալ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրով և Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Մինչև Կազմակերպության ստեղծվելը, Ծրագիրն իրականացվել է Կազմակերպության իրավանախորդ՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից, որը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2010թ. մարտի 11-ի թիվ 446-Ն որոշմամբ:

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը և գլխավոր տնօրենը:

ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1304-Ա որոշմամբ Կազմակերպության կառավարման իրականացումը վերապահվել է ՀՀ կառավարության լիազորված պետական մարմնին՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը:

Կազմակերպության գլխավոր տնօրենն իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը: ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1101-Ա հրամանով Կազմակերպության

գլխավոր տնօրենի պարտականությունների կատարումը 2018 թվականի դեկտեմբերի 27-ից, մինչև Կազմակերպության գլխավոր տնօրենի նշանակումը, վերապահվել է Կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Քրիստինե Ղալեչյանին: Նշված հրամանով Քրիստինե Ղալեչյանին գլխավոր տնօրենի պաշտոնում ժամանակավոր նշանակելու վերաբերյալ դեռևս առկա չէ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից համապատասխան գրանցումը: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Կազմակերպության գլխավոր տնօրենի պարտականությունները կատարել է գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վարդան Կարապետյանը:

ՀՀ վարչապետի 2009թ. հոկտեմբերի 26-ի թիվ 892-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի N 765 որոշմամբ հաստատված՝ օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրամադրվող միջոցների հաշվին ծրագրեր իրականացնող գրասենյակների գործունեության կազմակերպման կանոնակարգը և Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի, քաղաքային կայուն զարգացման ներդրումային և Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրերի իրականացման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու և համակարգելու նպատակով՝ ստեղծվել է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի, քաղաքային կայուն զարգացման ներդրումային և Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրերի կառավարման խորհուրդ, որի անհատական կազմը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված է ստորև.

Կառավարման խորհրդի նախագահ

Կարեն Կարապետյան	ՀՀ վարչապետ

Կառավարման խորհրդի անդամներ

Վաչե Գաբրիելյան	ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար
Վարդան Արամյան	ՀՀ ֆինանսների նախարար
Սուրեն Կարայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Դավիթ Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
Աշոտ Մանուկյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար
Վահան Մարտիրոսյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար
Տարոն Մարգարյան	Երևանի քաղաքապետ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Կամո Արեյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Գագիկ Գրիգորյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ
Վաչե Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ
Վահե Նիկոյան	Երևանի քաղաքապետի տեղակալ (համաձայնությամբ, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Ներսես Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
Աշոտ Մուսայան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Նորա Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)
Վարդան Կարապետյան	«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ)

Սույն ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ կառավարման խորհրդի անհատական կազմը ՀՀ վարչապետի 2019թ. ապրիլի 15-ի թիվ 404-Ա որոշմամբ փոփոխվել է և ներկայացված է ստորև .

Կառավարման խորհրդի նախագահ

Տիգրան Ավինյան	ՀՀ փոխվարչապետ

Կառավարման խորհրդի անդամներ

Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Արտակ Զեյնալյան	ՀՀ արդարադատության նախարար
Գարեգին Բաղրամյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պարտականությունները կատարող
Հակոբ Արշակյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար
Սուրեն Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար
Սարհատ Պետրոսյան	ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար
Բագրատ Բադալյան	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ
Ներսես Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
Հրաչյա Սարգսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությամբ՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Հայկ Սարգսյան	Երևանի քաղաքապետի տեղակալ (համաձայնությամբ՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում)
Նորա Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)
Քրիստինե Ղալեչյան	«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ)

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների միջազգային դաշնության Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ՝ հիմնված հաշվապահական հաշվառման դրամարկղային մեթոդի վրա» ստանդարտի համաձայն և ներկայացված են Ասիական Զարգացման Բանկի կողմից հրապարակված «Մասհանումների ուղեցույցի» համաձայն:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- Դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվություն,
- Ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվություն,
- Վարկային միջոցների մասհանման հաշվետվություն,
- Ընթացիկ հաշվի հաշվետվություն,
- Ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվություն,

- Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, որոնք ներառում են.
  - հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը,
  - այլ ծանոթագրություններ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2. Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը:

Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:

Դրամարկղային հիմունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

2.3. Ներկայացման արժույթը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4. Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Կազմակերպության Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Ղալեչյանի և Գլխավոր հաշվապահ/Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի ղեկավար Մանանա Թարփոշյանի կողմից 2019 թվականի մայիսի 7-ին:

2.5. Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են և գործարքներն իրականացվում են USD-ով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են USD-ի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված ՀՀ-ի հատկացումները և դրանց հաշվին կատարված ծախսումները ներկայացվում են USD-ով՝ կիրառելով վճարման նախորդ օրվա դրությամբ սահմանված արտարժույթի փոխարկման փոխարժեքը,
- ՀՀ դրամով արտահայտված ԱՋԲ-ի ֆինանսավորման հաշվին իրականացվող վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին ներկայացվում են USD-ով՝ կիրառելով վճարման նախորդ օրվա դրությամբ սահմանված արտարժույթի փոխարկման փոխարժեքը:

2018թ. փետրվարի 23-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքն է՝ 1 USD = 480.63 ՀՀ դրամ (31.12.2016՝ 1 USD = 483.94 ՀՀ դրամ):

2.6. Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

2.7. Ծրագրի ֆինանսավորում

Ծրագրի ֆինանսավորումը ԱԶԲ 2561-ARM (COL) վարկի միջոցներից՝ 38,443,000 SDR ընդհանուր գումարով, կատարվում է 100% չափով վարկային համաձայնագրով սահմանված բոլոր ծախսային հոդվածների նկատմամբ:

Վարկային միջոցներից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված հարկեր, տուրքեր և համանման այլ վճարներ չեն կատարվում: Վերջիններս կատարվում են ՀՀ համաֆինանսավորման հաշվին:

2.8. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Ֆինանսավորում

3.1. ԱԶԲ 2561-ARM (COL) վարկի ֆինանսավորում

	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.17-23.02.18թթ.	Աճողական առ 23.02.2018թ.
	USD	USD
Փոխհատուցում-SOE ընթացակարգ	-	2,024,290
Փոխհատուցում-Summary Sheet ընթացակարգ	-	1,925,266
Ուղղակի վճարում	22,809	52,195,980
Տոկոսագումարի մասհանում	-	916,213
Կանխավճար/փոխհատուցում	-	-
Ընդամենը	**22,809**	**57,061,749**

3.2. ԱԶԲ 2729-ARM վարկի վերաբաշխված միջոցներից ֆինանսավորում

	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.17-23.02.18թթ.	Աճողական առ 23.02.2018թ.
	USD	USD
Ուղղակի վճարում	-	2,996,620
Ընդամենը	**-**	**2,996,620**

3.3. Հայաստանի Հանրապետության ֆինանսավորում

ՀՀ համաֆինանսավորած միջոցներից 25,544 USD հատկացվել է աշխատանքների գծով ծախսերի փոխհատուցմանը, իսկ մնացած գումարներն ամբողջությամբ ուղղվել են հարկերի և տուրքերի վճարմանը, ինչպես նախատեսված է եղել վարկային համաձայնագրով:

4. Դրամական միջոցներ

Ընթացիկ հաշիվ	23.02.2018թ.	31.12.2016թ.
	USD	USD
ՀՀ համաֆինանսավորում		
ՀՀ գանձապետարանում (ՀՀ դրամ)*	-	544
Ընդամենը	**-**	**544**

5. Բյուջեի կատարում

Ծախսային հոդվածներ	23.02.18թ. դրությամբ	Բյուջե	Կատարում
	USD	USD	%
Աշխատանքներ	53,614,621	56,592,457	94.7
Խորհրդատվական ծառայություններ	3,653,605	3,653,605	100
Ապրանքներ	-	-	
Ծրագրի կառավարման աջակցություն	1,897,628	1,899,474	99.9
Տոկոսագումար	916,213	916,213	100
Այլ (ներառյալ տեղական հարկերը և տուրքերը)	12,519,045	10,000,000	125.2
Ընդամենը	**72,601,112**	**73,061,749**	**99.4**

6. Այլ մուտքեր/(ելքեր)

	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.17-23.02.18թթ.	Աճողական առ 23.02.2018թ.
	USD	USD
Տրանշ 2-ին տրամադրված գումար	-	(1,846)
ՀՀ գանձապետարանին վերադարձված գումարներ	(544)	(11,082)
	(544)	**(12,928)**

7. Կրեդիտորական պարտքեր

Տեղեկատվության նպատակով ստորև ներկայացվում է հաշվետու ամսաթվի դրությամբ չմարված կրեդիտորական պարտքերը:

Կրեդիտորական պարտքեր	23.02.2018թ.	31.12.2016թ.
	USD	USD
Հետերաշխիքային գումարներ*	3,378,402	3,378,402
Խորհրդատվության գծով	-	11,303
Ընդամենը	**3,378,402**	**3,389,705**

* Հետերաշխիքային գումարներն իրենցից ներկայացնում են շինարարական աշխատանքների գծով ներկայացված հաշիվների 10%-ի չափով պահումներ, որի կեսը (5%-ի չափով պահումները) վճարվել է շինարարական աշխատանքների ընդունման վկայագրի հաստատումից (2016թ.-ի հունիս) հետո, իսկ մնացած կեսը (մնացած 5%-ը) ենթակա է վճարման վկայագրի ընդունումից մեկ տարի հետո՝ պայմանով, որ երաշխիքային պայմանները բավարարված լինեն, իսկ շինարարական աշխատանքների ընդունման վկայագրում նշված թերությունները՝ վերացված: Թերությունների վերացման համար սահմանված ժամկետը լրացել է 2017թ.-ի հոկտեմբերին, և դրանից հետո մի քանի անգամ այդ ժամկետը երկարացվել է:

Սույն ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ թերությունների վերացման համար անհրաժեշտ աշխատանքների կատարման փաստի վերաբերյալ Կազմակերպության և կապալառուի միջև առկա են տարաձայնություններ, և կողմերը գտնվում են բանակցությունների մեջ: Նշված տարաձայնությունների վերջնական լուծումը կարող է ազդեցություն թողնել հետերաշխիքային գումարների գծով կրեդիտորական պարտքի վերը նշված մեծության (3,378,402 USD) վրա:

8. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և սույն ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը «Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-Ծրագիր 1»-ի մասով ներգրավված չի եղել որևէ դատավեճի մեջ:

Գլխավոր տնօրենի
ժամանակավոր
պաշտոնակատար
Քրիստինե Ղալեչյան

Գլխավոր հաշվապահ/Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի ղեկավար
Մանանա Թարփոշյան

07 մայիսի 2019թ.

ՀԱՎԵԼՎԱԾ. ԸՆԹԱՑԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 1
ԱՀԲ վարկ թիվ 2561-ARM (COL)
01.01.17-23.02.18թթ. ժամանակաշրջանի

USD

Նկարագրություն	Վճարված գումար	Պայմանագրի համար
Խորհրդատվական ծառայությունների գծով		
Աուդիտորական ծառայությունների համար	22,809	No 01-CS-014
Ընդամենը խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	**22,809**	
Հարկեր, տուրքեր		
Աուդիտորական ծառայությունների համար	2,283	No 01-CS-014
Ընդամենը հարկեր, տուրքեր	**2,283**	

Գլխավոր տնօրենի
ժամանակավոր
պաշտոնակատար
Քրիստինե Ղալեչյան

Գլխավոր հաշվապահ/Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի ղեկավար
Մանանա Թարփոշյան

07 մայիսի 2019թ.